AHPC
Հայկական բերքի առաջմղման կենտրոն
Armenian Harvest Promotion Center

№ Ա - 13

«17» մարտի, 2017թ.

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ԻԳՆԱՏԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Առաքելյան,

Հայկական բերքի առաջմղման կենտրոն, Ագրոտեխ և ֆրանսիական Ռիշել Գրուպ ընկերությունների նախաձեռնությամբ սույն թվականի ապրիլի 7-ին Երևան քաղաքում կանցկացվի սեմինար՝ "Ժամանակակից ջերմատնային տեխնոլոգիաները" թեմայով:

Սեմինարի կմասնակցեն ֆրանսիական Ռիշել Գրուպ (Richel Group), հոլանդական Էնզա Զադեն (Enza Zaden), Մարդենկրո Բի Վի (Mardenkro B.V.), Պրիվա (Priva), ԲիՎիԲի սուբստրատ (BVB Substrates), ուկրաինական Բիո Զաշիտա (Био Защита) ընկերությունները, որոնք կներկայացնեն հետևյալ թեմաները.

- Հայաստանում ջերմատների զարգացման միտումները և հիմնական մշակաբույսերը:
- Հայաստանի կլիմային հարմարեցված ջերմատների մոդելներ: Նոր սերնդի կիսափակ ջերմատներ:
- Վարունգի և ելակի նոր սորտեր:
- Ռեդուսիսթեմս ջերմատների ներկերի տեսականու ներկայացում. ստվերարկում – Ռեդուսոլ, Ռեդուհիթ, լույսի ցրում – Ռեդուֆյուզ, Ռեդուֆյուզ Այ Ար, մասնագիտացված ապրանքներ - Ռեդուֆլեքս Բլու, Ռեդուֆլեքս Գրին, մաքրում – Ռեդուքլին և դրանց կիրառումը:
- <<Պրիվա>> ջերմատան ավտոմատ կառավարման համակարգերը և դրանց կիրառումը:
- Հիդրոպոնիկ եղանակով բույսերի մշակության սուբստրատներ:
- Բույսերի պաշտպանության կենսաբանական միջոցներ, փոշոտող մեղուներ:

ՀՀ ք.Երևան,Ազատության պողոտա 27, 8-րդ հարկ, հեռ (+374 10) 58-98-63, 20-60-20, 20-62-20,էլ. հասցե: info@ahpc.am, www.ahpc.am
RA, Yerevan, 27Azatutyan Avenue, 8th floor, Phone: (+ 374 10) 58-98-63, 20-60-20, 20-62-20, e-mail: info@ahpc.am, www.ahpc.am

ՀՀ Գյուղատնտեսության Նախարարություն
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
«23» 03 2017թ.
Մուտք No Ա/4243-17

Սեմինարի աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու նպատակով շատ կարևորում ենք Հայաստանի Հանրապետության Գյուղատնտեսության նախարարության և նախարարության ենթակա կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունը:

Խնդրում ենք Ձեր աջակցությունը՝ սեմինարին նախարարության և նախարարության ենթակա շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցության հարցում:

Հարգանքներով,
"Հայկական բերքի առաջմղման
կենտրոն" ՓԲԸ գլխավոր տնօրեն՝ **Ալեքսան Առաքելյան**

ՀՀ ք.Երևան,Ազատության պողոտա 27, 8-րդ հարկ, հեռ (+374 10) 58-98-63, 20-60-20, 20-62-20,էլ. հասցե: info@ahpc.am, www.ahpc.am
RA, Yerevan, 27Azatutyan Avenue, 8th floor, Phone: (+ 374 10) 58-98-63, 20-60-20, 20-62-20, e-mail: info@ahpc.am, www.ahpc.am